

net de Bébé-ից. Ա. Բուդուզեան-Նազարեան. 6) «Ինչպէս պէտք է կերակրել ծծկեր մանուկներին». Թարգմ. տիկին Ս. Բաբայեան. 7) «Մի փոքրիկ յիշողութիւն» (խուլ ու համրների դպրոցը Վիեննայի Դեօբլինգ արուարձանում). տիկին Տիրուհի Կոստանեանց. 8) «Սրբուհի մայրապետ Գալֆայեան» (կենսագրութիւնը և պատկերը). 9) «Տիկին Սրբուհի Տիւսար» (կենսագրութ. և պատկերը): 10) «Տիկին Զապէլ Տօնէլեան (Սիպիլ)» (կենս. և պատկերը). 11) «Ղազարոս Աղայեանց» (կենսագրական և քըննադատական ակնարկ և պատկերը). Մ. Յար. 12) «Թոքախտաւոր հօր կտակը իւր էմմա դստեր». («Հիւանդ սէր»—Մանտեգացա). 13) «Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւններ. 14) «Մանկական օրինակելի գրադարան». (քաղուածք պ. Յ. Տէր-Միրաքեանի «Դեռահասների ազատ ընթերցանութիւնը» գրքից): Կանանց օրացոյցի բովանդակութիւնը կարող էր ի հարկէ աւելի հարուստ լինել, բայց չը պէտք է մոռանալ, որ այս առաջին փորձն է:

Փողովրդական գրադարան. Էդմօն Թեռի. «ՎԱՐԺԱՊԵՏԸ». Ֆրանս. Թարգմ. Լեոն Մ.-Աղ. 20 եր. գ. 5 կ. Թիֆլիս, 1902 թ.:

Էդմօն Թեռի մեզ պատմում է մի միջնադէպք Ֆրանսաւորուսական պատերազմի ժամանակից, մի պատկեր յաղթական գերմանացիների վայրագութիւնից, Ֆրանսիացի դիւղական ուսուցչի մի սխրագործութիւն:

Մի տարի, միմիայն մի տարի, Ֆրանսիայում տեղի ունեցան այնպիսի դէպքեր, որոնց նմանը ամեն օր կատարւում է Թիւրքիայում, և այդ մի տարուայ դէպքերը ստեղծեցին մանրավէպերի մի ամբողջ գրականութիւն:

Այդ մանրավէպերիցն է և Էդմօն Թեռի գրուածքը, որ պ. Լեոն Մելիք-Աղամեան Թարգմանել է Ֆրանսերէնից:

Թարգմանութիւնը չատ յաջող է:

Տ. Յ.

Կում Լեւ Տօրսոյ. «ԱՄՏԵՈՒՆ ԹԷ՝ ՄԱՄՕՆԱՅԻՆ». Թարգմ. Յով. Ստեփանեան. 18 եր. գ. 3 կող. Բագու. 1903 թ.:

Լեւ Տօրսոյի,—կարծեմ նա չէ ուղում, որ կոմա տիտղոսը կցուի իր անուան հետ,—«Աստծուն թէ՛ մամօնային» գրքոյը մի ոգևորուած քարոզ է գինու, օղիի և առհասարակ ոգեւից խըմիչքների գործածութեան դէմ: